



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

---

### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

18 հունիսի 2019 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետեյալ կազմով՝

նախագահող Ժ.Ն. Բաիշեւ,

զեկուցող դատավոր Վ.Խ. Սեյտիմովա,

դատավորներ Ա.Մ. Աժիբրաիմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն. Նեշատաեւա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար Ա.Վ. Լոզինսկայա, ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 19-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է հետեյալ խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 74-րդ, 76-րդ հոդվածների եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 29 որոշմամբ հաստատված՝ Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչների 2-րդ եւ 5-րդ

կետերի դրույթների պարզաբանման մասին Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի դիմումի հիման վրա:

## I. Դիմողի կողմից ներկայացված հարցը

Ղազախստանի Հանրապետության «Ատամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատը (այսուհետ՝ դիմող, Ձեռնարկատերերի ազգային պալատ) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 74-րդ, 76-րդ հոդվածների եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 29 որոշմամբ հաստատված՝ Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչների (այսուհետ՝ Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչներ, Չափորոշիչներ) 2-րդ եւ 5-րդ կետերի դրույթների պարզաբանման մասին դիմումով:

Դիմումի մեջ նշվում է, որ Պայմանագրի 76-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), ինչպես նաեւ անդամ պետությունների՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի «Մրցակցության ընդհանուր սկզբունքներն ու կանոնները» XVIII բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից՝ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրությամբ (Պայմանագրի թիվ 19 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) նախատեսված կարգով, եթե այդպիսի խախտումները թողնում են կամ կարող են թողնել բացասական ազդեցություն երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ բացառությամբ ֆինանսական շուկաների: Ընդ որում, Արձանագրության 8-րդ կետով սահմանված է, որ անդամ պետությունների տարածքում անդամ

պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներ (շուկայում գործող սուբյեկտներ) չհանդիսացող ֆիզիկական անձանց եւ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումն իրականացվում է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից:

Դիմողը նշում է, որ Պայմանագրի «Մրցակցության ընդհանուր սկզբունքներն ու կանոնները» XVIII բաժնի եւ Արձանագրության դրույթները Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչների հետ փոխկապակցվածությամբ կիրառելու առնչությամբ առաջացել են մի շարք հարցեր: Մասնավորապես, խոսքը Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լիազորված մարմինների միջև այն խախտումների կանխման մասով իրավասությունները սահմանազատելու մասին է, որոնց մասով արգելքը սահմանված է Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով:

Այն դեպքում, երբ առկա է Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի խախտում՝ ապրանքի մենաշնորհային բարձր կամ մենաշնորհային ցածր գին սահմանելու տեսքով, ապրանքի այդպիսի գինը կարող է միաժամանակ սահմանված լինել ինչպես անդամ պետության ներքին շուկայում իրենց գործունեությունն իրականացնող սպառողների համար, այնպես էլ անդրսահմանային շուկաներում իրենց գործունեությունն իրականացնող սպառողների համար:

Դիմողի կարծիքով, նշված դեպքում Չափորոշիչների 5-րդ կետի պահանջները կատարելու եւ Հանձնաժողովի իրավասությունը սահմանելու պարագայում միաժամանակ անդամ պետության լիազորված մարմինը կարող է ունենալ իրավասություն՝ կանխելու անդամ պետության ազգային օրենսդրության նույնանման պահանջի խախտումը: Դրա հետ կապված՝ կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, որի դեպքում մեկ գործողությամբ միաժամանակ կկատարվի Պայմանագրի 76-րդ հոդվածի խախտում՝ այդպիսի խախտումը կանխելու մասով Հանձնաժողովի իրավասության պարագայում, եւ անդամ պետության ազգային օրենսդրության խախտում՝ այդպիսի խախտումը կանխելու մասով անդամ պետության լիազորված մարմնի իրավասության պարագայում:

Նույնանման իրավիճակները, դիմողի կարծիքով, բնորոշ են նաև Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի 2-7-րդ ենթակետերում նշված այլ որակավորված կազմերին:

Դիմողը Դատարանին խնդրում է պարզաբանում տալ Պայմանագրի եւ Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչների հետեւյալ դրույթների կիրառման վերաբերյալ.

1. Այնպիսի իրավիճակում, երբ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից մեկ գործողությամբ (անգործությամբ) կատարվում է ինչպես համապատասխան անդամ պետության ներքին շուկայում դրա ազգային օրենսդրության խախտում, այնպես էլ անդրսահմանային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Չափորոշիչների 5-րդ կետի կատարման պայմանով, արդյո՞ք նշված գործողությունների (անգործության) ուսումնասիրումը վերապահվում է Հանձնաժողովի իրավասությանը (բացառիկ իրավասությանը):

2. Միաժամանակ անդամ պետության ներքին շուկայում դրա ազգային օրենսդրությունը եւ անդրսահմանային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետը խախտող գործողությունների (անգործության) կատարման համար անդամ պետության լիազորված մարմնի եւ Հանձնաժողովի կողմից տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտին) պատասխանատվության ենթարկելու դեպքում ինչպե՞ս պետք է իրականացվի իրավասությունների սահմանազատումը եւ նշված անձին պատասխանատվության ենթարկելը:

3. Հաշվի առնելով *non bis in idem* սկզբունքը եւ իրավասությունների սահմանված սահմանազատումը՝ ազգային մարմնում եւ Հանձնաժողովում տնտեսավարող սուբյեկտի միեւնույն (նույնանման) գործողությունների (անգործության) հետ կապված քննություն անցկացնելու (պատասխանատվության ենթարկելու) դեպքում ինչպե՞ս եւ ի՞նչ կարգով է իրականացվում քննության դադարեցումը դրա իրավասությունը չունեցող մարմնում (պատասխանատվության ենթարկելու մասին ակտի չեղարկումը):

## II. Ընթացակարգը Դատարանում

Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Դատարանի կանոնակարգ):

Դատարանի ստատուտի 73-րդ կետով նախատեսվում է, որ Դատարանը պարզաբանման վերաբերյալ գործերը քննում է Դատարանի մեծ կոլեգիայի նիստերի ժամանակ:

Դիմողի կողմից խնդրարկվող խորհրդատվական եզրակացության կայացման առնչությամբ Դատարանի՝ առարկայական եւ ըստ սուբյեկտի իրավագործությունը սահմանված է Դատարանի կանոնակարգի եւ Դատարանի ստատուտի դրույթների հիման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիայի 2019 թվականի ապրիլի 15-ի՝ «Պայմանագիրը եւ Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները պարզաբանելու վերաբերյալ Ձեռնարկատերերի ազգային պալատի դիմումը քննության առնելու մասին» որոշմամբ:

Պարզաբանման վերաբերյալ գործը Դատարանի կանոնակարգի 75-րդ հոդվածով սահմանված կարգով քննության համար նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել եւ պատասխաններ են ստացվել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից, Բելառուսի Հանրապետության հակամենաշնորհային կարգավորման եւ առևտրի նախարարությունից, Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարությունից, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հակամենաշնորհային կարգավորման պետական գործակալությունից, Ռուսաստանի դաշնային հակամենաշնորհային ծառայությունից (Ռուսաստանի ԴՀՏ), Բելառուսի Հանրապետության գերագույն դատարանից, Ղազախստանի Հանրապետության գերագույն դատարանից, Ղրղզստանի Հանրապետության գերագույն դատարանից, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանից, Ղազախստանի

Հանրապետության օրենսդրության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր Ռուսաստանի ժողովրդական տնտեսության եւ պետական ծառայության ակադեմիայի «Մրցակցային քաղաքականության եւ տնտեսության ուսումնասիրությունների կենտրոն» գիտահետազոտական լաբորատորիայից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունից:

### III. Դատարանի եզրահանգումները

Ղեկավարվելով Դատարանի ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան Պայմանագրի դրույթների եւ Միության մարմինների որոշումների պարզաբանումն իրականացնում է դրանց համակարգային փոխկապակցվածության շրջանակներում՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների եւ նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները:

Դատարանին առաջադրված հարցերը սերտորեն փոխկապակցված են, որի պատճառով անհրաժեշտ է, որ Մեծ կոլեգիան դրանք ուսումնասիրի մրցակցության ընդհանուր կանոնների նյութաիրավական կարգավորման, ինչպես նաեւ մրցակցության ոլորտում անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ իրավասությունների սահմանագատման հիմքերի տեսանկյունից:

1. Մրցակցության ընդհանուր սկզբունքներն ու կանոնները ներառված են Պայմանագրի XVIII բաժնում: Դրանց իրագործման կարգը սահմանված է Արձանագրությամբ, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով, ինչպես նաեւ Միության մարմինների կողմից ընդունված մի շարք ակտերով: Միության իրավունքով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնները տարածվում են անդամ պետությունների տարածքներում մրցակցային քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունների եւ

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների մասնակցությամբ այն հարաբերությունների վրա, որոնք թողնում են կամ կարող են թողնել բացասական ազդեցություն երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում մրցակցության վրա:

Դատարանի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 17-ի խորհրդատվական եզրակացությամբ սահմանվել է, որ «մրցակցության ընդհանուր կանոններն ունեն ուղղակի գործողություն եւ պետք է անդամ պետությունների կողմից անմիջականորեն կիրառվեն որպես միջազգային պայմանագրում ամրագրված նորմեր»:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված արգելքների խախտումը հիմք է տնտեսավարող սուբյեկտներին, ֆիզիկական անձանց եւ ոչ առեւտրային կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու համար:

Պայմանագրի 74-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ անդամ պետություններն իրավունք ունեն սահմանելու լրացուցիչ արգելքներ, լրացուցիչ պահանջներ եւ սահմանափակումներ Պայմանագրի 75-րդ եւ 76-րդ հոդվածներով նախատեսված արգելքների առնչությամբ:

Դատարանի 2018 թվականի հուլիսի 10-ի խորհրդատվական եզրակացության մեջ նշված է, որ «անդամ պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ վերազգային մակարդակով կարգավորմանը ներկայացված հարցերի վերաբերյալ Միության իրավունքի նորմերին հակասող ազգային իրավական ակտեր ընդունելուց»:

Այսպիսով, մրցակցության ոլորտում անդամ պետությունների մարմինների ցանկացած գործողություն, այդ թվում՝ ազգային նորմատիվ իրավական ակտերի ընդունմանն ուղղված գործողությունները պետք է համատեղելի լինեն Միության իրավունքի հետ, իսկ մրցակցության ոլորտում Միության իրավունքի դրույթների եւ ազգային նորմերի միջեւ հակասությունները կարգավորվում են՝ հաշվի առնելով Միության իրավունքի գերակայությունը:

2. Մրցակցության ընդհանուր սկզբունքներն ու կանոններն ուղղված են ինչպես Միության անդամ պետության տարածքում հակամրցակցային գործողությունների, այնպես էլ երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա բացասական ազդեցություն ունեցող գործողությունների հայտնաբերումն ու կանխումն ապահովելուն (Պայմանագրի 74-րդ հոդվածի 1-ին կետ):

2018 թվականի դեկտեմբերի 17-ի խորհրդատվական եզրակացությամբ Դատարանի մեծ կոլեգիան հանգել է այն եզրահանգման, որ «մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխումն ազգային մակարդակով իրականացվում է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից եւ վերազգային մակարդակով՝ Հանձնաժողովի կողմից: Ընդ որում, դրանց իրավասությունների սահմանազատումը կատարվում է՝ կախված մեկ անդամ պետության շուկայում մրցակցության վրա կամ անդրսահմանային շուկայում մրցակցության վրա խախտման բացասական ազդեցությունից»:

Մրցակցության ոլորտում անդամ պետությունների լիազորված մարմինները գործում են համապատասխան անդամ պետությունների (ազգային շուկաների) տարածքների սահմաններում: Այն դեպքում, երբ Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արգելքի խախտումը բացասական ազդեցություն է թողնում միայն մեկ անդամ պետության ազգային շուկայի վրա, տնտեսավարող սուբյեկտի գործողությունների (անգործության) կանխումը վերապահվում է Միության անդամ պետության լիազորված մարմնի իրավասությանը: Լիազորված մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում առաջնորդվում են մրցակցության ընդհանուր սկզբունքներով եւ կանոններով, որոնք նախատեսված են Պայմանագրով, Արձանագրությամբ, Միության իրավունքի այլ ակտերով, մրցակցության ոլորտում ներպետական օրենսդրությամբ:

Դատարանի մեծ կոլեգիան ընդգծում է, որ Պայմանագրի 74-րդ հոդվածի 2-րդ կետով եւ Արձանագրության 8-րդ կետով նախատեսված՝ անդամ պետությունների՝ իրենց տարածքում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելիս Միության իրավունքը կիրառելու պարտավորությունը չի բացառում



այնպիսի իրավիճակ, որի դեպքում ազգային օրենսդրությունը պարունակում է «Մրցակցության ընդհանուր կանոնների մասին» պայմանագրի դրույթների հետ համընկնող նորմեր: Միեւնույն ժամանակ Հանձնաժողովի կամ ադամ պետության լիազորված մարմնի իրավասությունը սահմանելու համար որոշիչ գործոն է շուկայի աշխարհագրական բնութագիրը:

3. Հանձնաժողովը՝ որպես Միության մարմին, գործում է Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով իրեն տրամադրված լիազորությունների սահմաններում (Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետ):

Մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահված է Հանձնաժողովին, եթե տվյալ կանոնների խախտումը թողնում է կամ կարող է թողնել բացասական ազդեցություն անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա:

«Անդրսահմանային շուկա» հասկացությունը սահմանվել է Պայմանագրի 74-րդ հոդվածի 1-ին կետով եւ իրենից ներկայացնում է շուկա, որն ընդգրկում է երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներ: Պայմանագրի 74-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները սահմանվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ՝ Հանձնաժողովի իրավասությունը սահմանելու նպատակով: Չափորոշիչները հաստատված են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 29 որոշմամբ:

Չափորոշիչների 2-րդ կետով հստակեցվել է Պայմանագրի 74-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ անդրսահմանային շուկայի հասկացությունը՝ այն սահմանելով որպես ապրանքային շուկա, որի աշխարհագրական սահմաններն ընդգրկում են երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքներ: Ապրանքային շուկայի հասկացությունը բերված է Արձանագրության 2-րդ կետի 19-րդ ենթակետում: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանների որոշումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 7 որոշմամբ հաստատված՝ Մրցակցության վիճակի գնահատման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 23-31-րդ կետերի հիման վրա:

Այսպիսով, մրցակցության ոլորտում Հանձնաժողովի իրավասությունը սահմանվում է՝ ելնելով շուկայի՝ անդրսահմանային լինելու վերաբերյալ հիմնական կանոնից՝ աշխարհագրական չափորոշից: Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Չափորոշիչների 2-րդ կետի նորմն ընդհանուր բնույթ ունի եւ ամրագրում է անդրսահմանային ապրանքային շուկայի հասկացությունը, որը ենթակա է կիրառման Պայմանագրի 76-րդ հոդվածով կարգավորվող իրավահարաբերությունների առնչությամբ:

4. Մեծ կոլեգիան ուշադրություն է դարձնում այն փաստին, որ Չափորոշիչներով նախատեսված են հատուկ կանոններ, որոնք լրացուցիչ կիրառվում են ընդհանուր աշխարհագրական չափորոշի հետ միասին՝ կախված մրցակցության ոլորտում խախտումներից՝ դրանք կանխելու նպատակով: Չափորոշիչների 3-5-րդ կետերով սահմանվում են լրացուցիչ պայմաններ՝ ըստ Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված արգելքների այն տեսակների, որոնց խախտումների կանխումն անդրսահմանային շուկաներում վերապահվում է Հանձնաժողովի իրավասությանը:

Այսպես, Չափորոշիչների 5-րդ կետով սահմանվում է քանակական եւ որակական չափորոշիչը՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արգելքների խախտումները (գերիշխող դիրքի չարաշահում) կանխելու նպատակով՝ կախված շուկայում գործող սուբյեկտների թվից եւ դրանց մասնաբաժնից:

Չափորոշիչների 5-րդ կետով սահմանված են անդրսահմանային շուկայում իրացման կամ գնման ծավալի մասնաբաժինները, որոնք այնպիսի պայմաններ են, որոնց կատարման դեպքում սահմանվում է անդրսահմանային շուկայում տնտեսավարող սուբյեկտի գերիշխող դիրքը, եւ համապատասխանաբար այդ դիրքի չարաշահումը ենթակա է կանխման Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով անդրսահմանային շուկայում մրցակցության վրա բացասական ազդեցությունը: Տվյալ եզրահանգումը համապատասխանում է Մեթոդիկայի 57-59-րդ կետերին: Համապատասխանաբար, Չափորոշիչների 5-րդ կետի պայմանները չկատարելը նշանակում է, որ անձի գործողություններում բացակայում են

Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հատկանիշներ, ինչը բացառում է Հանձնաժողովի՝ այդ գործողությունները կանխելու լիազորությունները:

Դրա հետ կապված՝ Դատարանի մեծ կոլեգիան փաստում է, որ գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտի գործողությունների (անգործության) արգելքի այն խախտումների կանխումը, որոնք թողնում են կամ կարող են թողնել բացասական ազդեցություն անդրսահմանային շուկաների վրա, իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ Չափորոշիչների 5-րդ կետով սահմանված պայմանները կատարելու դեպքում: Համապատասխան չափորոշիչները բավարարելու դեպքում Հանձնաժողովի՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ոլորտում իրավասությունը համարվում է բացառիկ:

5. Իրավասությունների սահմանազատման տեսանկյունից Միությունում ստեղծվել է մրցակցության հարցերի տարածաշրջանային եւ ազգային կարգավորման ոչ թե համատեղ, այլ երկմակարդակ համակարգ՝ կախված այն հանգամանքից, թե ընդհանուր արգելքների խախտումը բացասական ազդեցություն է ունեցել (կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ) անդրսահմանային կամ ազգային շուկաների վրա: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ անդրսահմանային շուկան ընդգրկում է անդամ պետությունների ապրանքային շուկաները, անդրսահմանային շուկաների եւ միաժամանակ անդամ պետության ազգային շուկայի վրա բացասական ազդեցությունը (հնարավոր բացասական ազդեցությունը) հարկավոր է դիտարկել որպես անդրսահմանային շուկաներում միասնական խախտում:

Դատարանի մեծ կոլեգիան հանգում է այն եզրահանգման, որ միեւնույն խախտումների առնչությամբ իրավասությունների իրականացումը միաժամանակ Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից հնարավոր չէ: Այն դեպքում, երբ անձը մեկ գործողությամբ խախտում է անդամ պետության օրենսդրությունը եւ Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետը, ընդ որում, այդպիսի խախտումը թողնում է կամ կարող է թողնել բացասական ազդեցություն անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա (առկա է

խախտման կազմի համընկնում), անդրսահմանային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետը չկատարելը ենթակա է կանխման Հանձնաժողովի կողմից եւ բացառում է պատասխանատվությունը՝ ըստ ազգային օրենսդրության:

6. Մեծ կոլեզիան ուշադրություն է դարձնում անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի փոխգործակցության մեխանիզմի առկայությանը: Արձանագրությունը պարունակում է ընթացակարգային երաշխիքներ, որոնք բացառում են միաժամանակ Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից միեւնույն խախտումների մասով ուսումնասիրություն, քննություն անցկացնելը եւ պատասխանատվության ենթարկելը:

6.1. Համաձայն Արձանագրության 58-րդ կետի՝ եթե մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումների ուսումնասիրման ժամանակ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Չափորոշիչների հիման վրա պարզվում է համապատասխան դիմումների (նյութերի) ուսումնասիրման մասով ԵՏՀ-ի ենթակայությունը, ապա այդ դիմումները (նյութերը) փոխանցվում են Հանձնաժողով:

Նույնանման կարգ գործում է նաեւ այն դեպքում, երբ մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումների (նյութերի) ուսումնասիրման ժամանակ Հանձնաժողովի կողմից պարզվում է անդամ պետությունների լիազորված մարմինների ենթակայությունը. դիմումը (նյութերը) Միության անդամ պետությունների լիազորված մարմիններին փոխանցելու մասին որոշումն ընդունվում է նաեւ դրանց ուսումնասիրման ցանկացած փուլում (Արձանագրության 60-րդ կետի 1-ին պարբերություն):

ԵՏՀ-ի եւ լիազորված մարմինների փոխգործակցության ընթացակարգային ասպեկտները կարգավորված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 23-ի «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումների (նյութերի) ուսումնասիրման կարգի մասին» թիվ 97, «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների վերաբերյալ

քննությունն անցկացնելու կարգի մասին» (այսուհետ՝ Քննությունն անցկացնելու կարգ) թիվ 98, «Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննության կարգի մասին» թիվ 99 որոշումներով եւ հիմնվում են համագործակցության եւ թափանցիկության սկզբունքների վրա:

Այսպիսով, Միության իրավունքով նախատեսված են վերազգային եւ ազգային մարմինների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս դրանց միջեւ փոխգործակցության նորմատիվ իրավական եւ կազմակերպաիրավական մեխանիզմներ, այդ թվում՝ սահմանված իրավասությանը համապատասխան՝ դիմումների (նյութերի) ուսումնասիրման եւ քննությունների անցկացման փուլերում գործերն ըստ ենթակայության փոխանցելու մասով: Տվյալ մեխանիզմներն ուղղված են մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների կանխման լիազորություններ չունեցող մարմինների կողմից այդ խախտումների կանխումը բացառելուն՝ ելնելով Միության իրավունքով սահմանված՝ իրավասությունների սահմանազատման կանոններից:

6.2. Միության իրավունքով նախատեսված՝ իրավասությունների սահմանազատումը եւ դիմումների ու նյութերի՝ ըստ ենթակայության փոխանցումը Պայմանագրի համապատասխանաբար 8-րդ հոդվածի 2-րդ կետում եւ 3-րդ հոդվածի 7-րդ պարբերությունում նորմատիվ կերպով ներկայացված՝ իրավասություն վերապահելու եւ համագործակցելու սկզբունքների իրագործման մասնավոր դեպքեր են: Ընթացակարգային առումով դա հիմք է համապատասխան իրավասություն չունեցող մարմիններում դիմումների (նյութերի) ուսումնասիրումը, քննությունների անցկացումը կասեցնելու եւ դադարեցնելու համար:

Մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումը Հանձնաժողովի կողմից ուսումնասիրման համար փոխանցելու մասին անդամ պետության լիազորված մարմնի որոշմանը կցվում է Հանձնաժողովին ուղղված համապատասխան դիմումը: Այդպիսի դիմումը հիմք է մրցակցության ընդհանուր

կանոնների խախտման վերաբերյալ դիմումի՝ լիազորված մարմնի կողմից ուսումնասիրումը կասեցնելու համար՝ մինչև Հանձնաժողովի կողմից հետևյալ որոշումներից մեկն ընդունելը՝ խախտումների վերաբերյալ քննություն անցկացնելու մասին, դիմումն ըստ ենթակայության փոխանցելու մասին, դիմում այն լիազորված մարմին վերադարձնելու մասին, որտեղից այն ստացվել է: Լիազորված մարմնի դիմումի բովանդակության հետ կապված հարցերը, կից ներկայացվող փաստաթղթերը, դիմողի ծանուցման ժամկետները եւ ընթացակարգային մյուս ասպեկտները կարգավորված են Արձանագրության 58-րդ կետով:

Որպես ազգային լիազորված մարմինների կողմից դիմումի (նյութերի) ուսումնասիրումը դադարեցնելու հիմք նախատեսված է անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների վերաբերյալ քննություն անցկացնելու կամ այդ կանոնների խախտման վերաբերյալ դիմումը (նյութերը) ըստ ենթակայության մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններ փոխանցելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը (Արձանագրության 59-րդ կետ): Արձանագրության 59-րդ կետի պարզաբանումը վկայում է, որ տվյալ նորմն իմպերատիվ բնույթ է կրում, եւ դիմումի (նյութերի) ուսումնասիրման դադարեցումը կախված չէ անդամ պետության մարմնի հայեցողությունից:

Քննություն անցկացնելու կարգի 14-15-րդ կետերին համապատասխան՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործի հարուցումը մերժելու մասին որոշումը Հանձնաժողովի կողմից կայացվում է տնտեսավարող սուբյեկտի գործողություններում անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման հատկանիշների բացակայության դեպքում: Դիմումը (նյութերը) ըստ ենթակայության լիազորված մարմիններ փոխանցելու մասին որոշումը կայացվում է այն դեպքում, երբ քննություն անցկացնելու ընթացքում հայտնաբերվել է, որ ուսումնասիրվող խախտումը վերապահված չէ Հանձնաժողովի իրավասությանը, եւ անցկացված քննության հիման վրա եզրահանգում է կատարվել անդամ պետության հակամենաշնորհային օրենսդրության խախտման հատկանիշների առկայության մասին:

Վերոնշյալի հիման վրա՝ Մեծ կոլեգիան հանգում է այն եզրահանգման, որ քննություններ անցկացնելու իրավասություն չունեցող մարմիններում այդ քննությունների անցկացումը դադարեցնելու կարգը սահմանվում է Արձանագրության VI բաժնով:

7. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ միաժամանակ անդամ պետության լիազորված մարմնի եւ Հանձնաժողովի որոշումների հիման վրա՝ մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար տնտեսավարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու եւ պատժամիջոցներ նշանակելու դեպքում չեղարկման ենթակա է իրավասությունը խախտող որոշումը:

Միության իրավունքում *non bis in idem* սկզբունքի մասնավոր դրսեւորում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 118 որոշմամբ հաստատված՝ Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար տուգանքների հաշվարկման մեթոդիկայի 11-րդ կետի «գ» ենթակետի նորմը, որի համաձայն՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար տուգանային պատժամիջոցների կիրառման դեպքում պահպանվում է այն կանոնը, որ իրավախախտը չի կարող երկու անգամ պատասխանատվություն կրել միեւնույն խախտման համար:

Ստատուտի 50-րդ կետի 1-ին ենթակետի ուժով՝ խորհրդատվական եզրակացության տրամադրում ներառող արդարադատություն իրականացնելիս Դատարանը կիրառում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը: Դատական ակտ կայացնելիս Դատարանը հիմնվում է Միության անդամ պետությունների ընդհանուր սահմանադրական ավանդույթների, ինչպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային համաձայնագրերի վրա:

Մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելիս տվյալ մոտեցման կիրառումը նշանակում է, որ անձը չի կարող միեւնույն արարքի կատարման համար պատասխանատվության ենթարկվել միաժամանակ Հանձնաժողովի եւ անդամ պետության լիազորված մարմնի որոշումների հիման վրա (*non bis in idem*):

Մյս դեպքում *non bis in idem* սկզբունքի կիրառումը եւ իրավասությունների սահմանազատման վերաբերյալ Միության իրավունքի դրույթների բարեխիղճ կատարման պարտավորությունը հանգեցնում են «Հանձնաժողովի եւ ազգային մարմինների միջեւ լիազորությունների սահմանազատման մասին» պայմանագրի պահանջների խախտմամբ ընդունված որոշումը չեղարկելուն:

8. Վերոնշյալի հիման վրա Դատարանի մեծ կոլեգիան հանգում է հետևյալ եզրակացություններին:

8.1. Այն դեպքում, երբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տնտեսավարող սուբյեկտի գործողությունների (անգործության) արդյունքում կատարվում է ինչպես համապատասխան անդամ պետության ներքին շուկայում դրա ազգային օրենսդրության խախտում, այնպես էլ անդրսահմանային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Չափորոշիչների 5-րդ կետի կատարման պայմանով, նշված գործողությունների (անգործության) ուսումնասիրումը վերապահվում է Հանձնաժողովի բացառիկ իրավասությանը:

8.2. Հաշվի առնելով Միության իրավունքով սահմանված՝ իրավասությունների սահմանազատման չափորոշիչները, Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության կարգը՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտում Հանձնաժողովի եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից իրենց իրավասությունները միաժամանակ իրականացնելու հնարավորությունը բացառվում է:

Անդրսահմանային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ գործը Հանձնաժողովի կողմից քննելը բացառում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից այն տնտեսավարող սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, որի գործողությունները հանգեցնում են ազգային շուկայում Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի խախտման:



8.3. Միաժամանակ եւ՛ լիազորված մարմնի որոշման, եւ՛ Հանձնաժողովի որոշման հիման վրա՝ մրցակցության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկելու եւ պատժամիջոցներ նշանակելու դեպքում չեղարկման ենթակա է Պայմանագրով նախատեսված իրավասությունը խախտող որոշումը:

Քնություններ անցկացնելու իրավասություն չունեցող մարմիններում քնությունների անցկացումը դադարեցնելու կարգը սահմանվում է «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության (թիվ 19 հավելված) VI բաժնով:

#### **IV. Եզրափակիչ դրույթներ**

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ժ.Ն. Բաիշեւ

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրաիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա. Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա